



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

<< >> \_\_\_\_\_ 2018թ.

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

N: \_\_\_\_\_

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

ՈՒՂԵՐՁ

## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՒՆՈՒՄԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԿԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի հայրենակիցներ.

Այսօր համայն հայությունը ոգեկոչում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը:

1915 թվականին Օսմանյան Թուրքիան իրագործեց իր հրեշավոր ծրագիրը. միլիոնավոր անմեղ մարդիկ դարձան իր նմանը չունեցող՝ մարդկության դեմ ուղղված ոճրագործության զոհեր: Ոճրագործություն, որի արդյունքում հայ ազգը կորցրեց հայրենիքի զգալի զանգված, դարերի ընթացքում ձեռք բերած հոգևոր-մշակութային ու նյութական արժեքներ: Ողբերգություն, որի հետևանքները զգացնել են տալիս մինչ օրս:

Միայն շնորհիվ ինքնապաշտպանական մարտերի հնարավոր եղավ փրկել արևմտահայոց մի զգալի զանգված: Ինքնապաշտպանական ջոկատները դարձան հայկական բանակի հիմքը, որն ապահովեց մեր անկախ պետականության վերածնունդը:

Մենք հայտնում ենք մեր երախտագիտությունն այն ժողովուրդներին ու պետություններին, ովքեր դատապարտել են ոճրագործությունը, ովքեր անցած տարիների ընթացքում պայքարել են մեզ հետ պատմական ճշմարտությունը աշխարհին ներկայացնելու գործում:

Քաղաքակիրթ աշխարհը պետք է իմանա, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումն անխուսափելի է, որ պատմության դասերից հետևություններ չանելը, մոռացության մատնելը կհանգեցնի նմանօրինակ նոր ոճիրների, ահաբեկչությունների ու բռնությունների:

Խոնարհվելով հայոց Մեծ Եղեռնի անմեղ զոհերի հիշատակի առջև՝ մեր ժողովրդին ցանկանում են անկոտրում կամք և հավատ ապագայի նկատմամբ:

Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ